



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2016 թվականի N 875 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-ԻՆ 284-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանում օգտագործվող ռոռզման ջրի դիմաց գանձվող վարձավճարների նկատմամբ 2016 թվականի համար 50 տոկոս զեղչ կիրառելու նպատակով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին 2016 թվականի ինն ամսում հատկացնել 17,740.8 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող

միջոցառումների մասին» N 1555-Ն որոշման N 11 հավելվածի NN 11.33 և 12 աղյուսակներում կատարել լրացումներ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին գումար հատկացնելու և ըստ ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության չափաքանակները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 181-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 284-Ն որոշման 2-րդ կետում «20,371.31» թիվը փոխարինել «20,830.31» թվով, իսկ N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին՝ առաջարկություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ Մեղրու տարածաշրջանում ոռոգման ջրի գործող սակագինը 2017 թվականից սկսած 50 տոկոսով նվազեցնելու վերաբերյալ հարցը սահմանամերձ տարածաշրջանների հիմնախնդիրների լուծման միջոցառումների ծրագրի մեջ ներառելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2016 թ. օգոստոսի 29
Երևան

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ
 N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 11.33 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

Չափորոշիչներ		Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
		ոչ ֆինանսական ցուցանիշներ		ֆինանսական ցուցանիշներ	
		ինն ամիս	տարի	ինն ամիս	տարի
ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները					
1. Քաղաքականության միջոցառումներ					
1.1. Ծառայություններ					
Ծրագրային դասիչը		<u>Անվանումը</u>			
		Ոռոգման ծառայություններ մատուցող քնկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում			
1004		<u>Նկարագրությունը</u>			
ԱԾ02		Ոռոգման ոլորտի սուբսիդավորում ՋՕԸ-ների համար հաստատված ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով			
		x	x	17,740.8	17,740.8
		Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազ. դրամ)			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ԴԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1555-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ
 N 12 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԸ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե
 Բաժին 2.

Գերատեսչության կողմից իրականացվող քաղաքականության միջոցառումների ծրագրային խմբավորումը

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը	Ծրագիրը/քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
ծրագիրը	միջոցառումը	(բաժինը/խումբը/ դասը)		ՀՀ 2016 թվականի պետական բյուջե (հազ. դրամ)
1004	ԾՐԱԳԻՐ			
			Միջոցառումներ՝ ծառայություններ	
	ԱԾ02	04.02.04	Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերությունների ֆինանսական աջակցության տրամադրում	17,740.8
			Մատուցվող ծառայության նկարագրությունը	
			Ոռոգման ոլորտի սուբսիդավորում ԶՕԸ-ների համար հաստատված ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով	
			Ծառայություն մատուցողի անվանումը	
			Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններ (ԶՕԸ- ներ)	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
 ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
 ՀՀ կառավարության 2016 թվականի
 օգոստոսի 25-ի N 875 - Ն որոշման

«Հավելված N 3
 ՀՀ կառավարության 2016 թվականի
 մարտի 17-ի N 284 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀՐԱՏԱՊ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱԿԱՇԵՂԵՂԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ

(հազ. դրամ)

NN ը/կ	Մարզի անվանումը	Աշխատանքի համար նախատեսվող գումարը, այդ թվում՝		Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության նախատեսվող գումարը, այդ թվում՝	
			տեխնիկական հսկողության գումարը		հեղինակային հսկողության գումարը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Արարատի մարզ	158,114.86	2,982.00	5,480.0	640.0
1.1.	Արաքս գետի ափի ամրացում ՀՀ Արարատի մարզի 4/7 սահմանային սյան հատվածում	39,195.00	780.0	1,490.0	160.0
1.2.	Արաքս գետի ափի ամրացում ՀՀ Արարատի մարզի 3/7 (1500 մետր) հատվածում	76,619.50	1,320.0	2000.0	300.0

1	2	3	4	5	6
1.3.	Նարեկի հեղեղատարի հունի մաքրում և ավերի ամրացում ՀՀ Արարատի մարզի Նարեկի համայնքի տարածքում (վտանգավոր շուրջ 200 մետր հատվածը)	42,300.36	882.0	1,990.0	180.0
2.	ՀՀ Արմավիրի մարզ	300,412.00	3,912.0	7,339.8	1,211.4
2.1.	Արաքս գետի ավի ամրացում ՀՀ Արմավիրի մարզի 18/2-19 սահմանային սյուների հատվածներում	300,412.00	3,912.0	7,339.8	1211.4
3.	ՀՀ Գեղարքունիքի մարզ	75,985.23	1,404.0	7,518.5	340.0
3.1.	Գավառագետ գետի հունի մաքրում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի տարածքում	46,626.60	816.0	120.0	120.0
3.2.	Մարտունի գետի հունի մաքրում ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովտի համայնքի տարածքում	29,358.63	588.0	1,480.0	120.0
3.3	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառագետ գետի հունի մաքրում և ավերի ամրացում Գավառ քաղաքի Արծվաքար թաղամասի և Նորատուս համայնքի հատվածներում	0.00	0.0	5,918.51	100.0
4.	ՀՀ Սյունիքի մարզ	122,257.60	1,800.0	492.0	492.0
4.1.	Արաքս գետի ավի ամրացում ՀՀ Սյունիքի մարզի Ալվանքի համայնքի տարածքում	122,257.60	1,800.0	492.0	492.0
	Ընդամենը	656,769.69	10,098.0	20,830.31	2,683.4

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ



Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ